ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

"28" "02" 2017թ. Թ/հ 17/47

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի

նախագահ Տիգրան Մուկուչյանին

ք. Երևան, 0009, Գրիգոր Քոչարի 21ա

Հարգելի պարոն Մուկուչյան,

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածը՝ խնդրում ենք տալ պարզաբանում ՀՀ ընտրական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 69-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ՝ իրավական ակտի տարընթերցումից խուսափելու նպատակով:

Օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Ազգային ժողովի ընտրությունների դեպքում սահմանված նմուշի քվեաթերթիկն անվավեր է, եթե ներառում է ավելորդ* ***գրառում:***»

Տեղամասի քվեարկության արդյունքների ամփոփման նիստում «գրառում» եզրույթը տարընկալումների տեղիք կարող է տալ, քանի որ Օրենսգրքի կարգավորումներով առկա չէ գրառման հստակ սահմանումը: Բացի այդ, գործածվում է նաև «նշում» եզրույթը, և Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 17.06.2016թ. N20-Ն որոշմամբ, որպես ընտրողի կողմից կատարվող նշումի միատեսակ ձև, սահմանել է «**V**» նշանը:

Օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրողն ընտրություններին մասնակցող կուսակցություններից որևէ մեկին ընտրում է այդ կուսակցության քվեաթերթիկը քվեարկության ծրարի մեջ դնելու միջոցով: Տարածքային ընտրական ցուցակի թեկնածուներից որևէ մեկին ընտրելու դեպքում ընտրողն իր ընտրած կուսակցության քվեաթերթիկի երկրորդ էջում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ձևով միատեսակ* ***նշում*** *է կատարում այն թեկնածուի անվան դիմացի քառանկյունում, որին կողմ է քվեարկում:*

Նույն օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *եթե քվեաթերթիկը երկրորդ էջում ներառում է մեկից ավելի թեկնածուների օգտին* ***նշումներ կամ որևէ նշում չի*** *ներառում, կամ ակնհայտ խախտված է քվեաթերթիկում նշում կատարելու սահմանված ձևը, ապա քվեաթերթիկը մնում է միայն ընտրություններին մասնակցող կուսակցության օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթում:*

Հայաստան, Երևան, 0019, Անտառային փողոց, տուն 164/1,
Հեռ.՝ (374 10) 569589, 569689
Ֆաքս՝ (374 10) 569519
info@transparency.am • www.transparency.am

Գործնականում հնարավոր է իրավիճակ, որ ընտրողը, վերցնելով իր նախընտրած կուսակցության քվեաթերթիկը և առաջին էջում տեսնելով համապետական ընտրական ցուցակի առաջին երեք թեկնածուների ազգանունները, անունները և հայրանունները՝ միատեսակ նշում (V) կատարի նրանց կամ նրանցից մեկի անվան դիմաց: Օրենսգիրքը չի նախատեսում առաջին էջում որևէ նշումի կատարում, հետևաբար ինչպե՞ս է գնահատելու տեղամասային հանձնաժողովը այս քվեաթերթիկի վավերականությունը, և սահմանված կարգի միատեսակ նշանը դիտարկելու է որպես գրառում, թե՞ որպես նշում:

Համադրելով վերոնշյալ իրական նորմերի կարգավորումները և հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝ ներկայացնում ենք Ընտրական օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ մեր ընկալումը, այն է՝ գտնում ենք, որ եթե ընտրողը քվեաթերթիկի առաջին էջում կատարել է ԿԸՀ-ի սահմանած միասնական նշումը՝ V-ն, ապա այն չի կարող ճանաչվել գրառում: Օրենսգրքի կարգավորումների համաձայն «նշում»-ը այն սահմանված միասնական նշանն է, որն արտացոլում է ընտրողի կամքը և նրա նախընտրությունը: Սահմանված միասնական նշումից (V) դուրս ցանկացած այլ նշան՝ նիշ, գիր կամ սիմվոլ և այլն, պետք է որակվի որպես գրառում՝ դրանից բխող իրավական հետևանքով (քվեաթերթիկի անվավերություն):

Դիմելով ձեզ որպես բնագավառի լիազորված պետական մարմին՝ խնդրում ենք տալ պարզաբանում այս հարցի վերաբերյալ, ինչը մեծապես նպաստելու է միասնական պրակտիկայի ձևավորմանը տեղամասին հանձնաժողովների կողմից՝ բացառելով օրենքի կամայական, հաճախ՝ իմաստը խեղաթյուրող մեկնաբանությունները:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

ՀԿ գործադիր տնօրեն Սոնա Այվազյան

Հայաստան, Երևան, 0019, Անտառային փողոց, տուն 164/1,
Հեռ.՝ (374 10) 569589, 569689
Ֆաքս՝ (374 10) 569519
info@transparency.am • www.transparency.am